



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

Մարտ 2, 1955

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N.Y.

Արժանաշնորհ
Տ. Արթուր ԲՀՆԿ. Մմբատեան
Նախագահ Մխական Խորհուրդի
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյն
Ռայսին.

Սիրելի Տէր Արթուր,

Ստացած ենք տարւոյս Փետրուար 13 թուակիր Ձեր Մխական տեղեկագրութիւնը, որով կը հարգողէիք թէ Ձեր նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Մխական Խորհուրդի մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ամբողջական նոր կազմը, կը խնդրէիք վաւերացման պաշտօնադրութիւնը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ կը վայելեն ընտրողներու վստահութիւնը իրքեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ, գրովս կը վաւերացնենք ու կը հաստատենք անոնց ընտրութիւնն ու պաշտօնները Հետեւեալ կերպով.

| | | |
|-------|----------------------|------------|
| Տիարք | Յարութիւն Զիրքիւնեան | Ատենապետ |
| | Մղիա Գարկիւնեան | Ատենադպիր |
| | Սարգիս Ազկիւլեան | Գանձապահ |
| | Պետրոս Ինճասուլեան | Խորհրդական |
| | Կիւլպէնկ Կիւլպէնկեան | Խորհրդական |
| | Յարութիւն Թաղթաղեան | Խորհրդական |
| | Վահան Պարաղամեան | Խորհրդական |

Կ'օրհնենք նորակազմ Մխական Խորհուրդի բոլոր անդամները եւ վստահ ենք թէ անոնք պիտի աշխատին մեր Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Տիրոջ փառքին համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն, կը ցանկանք որ անոնք բոլորեն ուրիշ արդիւնաւոր գործունէութեան շրջան մը:

Մնամք հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի